ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Պռո Ինվեստ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Փոքր բացվող բազմոց՝ արտաքին չափերը՝ 120 x 90 x 90 սմ: Բազմոցի նստատեղի բարձրությունը հատակից՝ 45 սմ: Կտորը՝ բարձրորակ վելյուրե գործվածքից, մաշվածքադիմացկուն՝ հեշտ խնամք ապահովելու համար: Ներքին կառուցվածքը պատրաստված է անհատական զսպանակային բլոկից և բարձր խտության պոլիուրեթանային շերտից, որոնք ապահովում են օրթոպեդիկ հարմարավետություն և երկարատև ծառայության ժամկետ: Բացման մեխանիզմը՝ եվրոգիրք տիպի, որը հնարավորություն է տալիս բազմոցը արագ և հուսալի ձևով վերափոխել մահճակալի: Քնելու մասի չափերը՝ 90 x 196 սմ, համապատասխան բազմոցի արտաքին չափսերին: Բազմոցը ունի հագուստի ներքին պահոց, նախատեսված անկողնային պարագաների կամ այլ իրերի պահպանման համար: Բազմոցը ունի մեկ ամբողջական բարձ՝ ներառված համալրման մեջ: Բազմոցի ապրանքանիշը՝ Մեբելգրադ: Ապրանքը գնորդի հասցե է մատակարարվելու քանդված վիճակում՝ ամբողջությամբ կցամասերով, գործարանային ստվարաթղթե և պաշտպանիչ փաթեթավորման մեջ, որտեղ յուրաքանչյուր տարր լրացուցիչ ապահովված կլինի հաստ թղթով կամ փրփրապատ շերտերով՝ տեղափոխման ընթացքում հնարավոր վնասվածքներից պաշտպանելու համար: Հավաքումն իրականացվելու է շահառուի բնակարանում՝ մատակարարի ուժերով: Մատակարարի կողմից կտրամադրվի 6 ամիս երաշխիք, իսկ մատակարարման պահին արտադրողից կամ մատակարարից պահանջվում է ներկայացնել ապրանքի համապատասխանության հավաստագրեր և սերտիֆիկատներ, որոնք հաստատում են դրա համապատասխանությունը գործող տեխնիկական նորմերին և ստանդարտներին: Մատակարարումը կատարել անհրաժեշտ քանակներով՝ պատվիրատուի նախնական պահանջի (հայտի) հիման վրա՝ այն

	ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում: Նախնական հայտը ներկայացվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Про Инвест в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁՔ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	